ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 20-ի N 933-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին»
Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման անհրաժեշտության վերաբերյալ

Իրավական ակտի անհրաժեշտությունը

Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 20-ի N 933-Ն որոշմամբ հաստատվել է «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի օպերատիվ տեղեկատու քարտադարանը ձևավորելու և տեղեկություններ տրամադրելու կարգը» (այսուհետ՝ Կարգ): Այդ Կարգի 10-րդ կետի համաձայն՝ դատարանները քրեական գործերով դատարանի վերջնական որոշումների մասին տեղեկանքները (N 6 ձև), դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո ոչ ուշ, քան 5-օրյա ժամկետում ուղարկում են քննություն վարող մարմին, որտեղ քրեական գործերի հաշվառման մատյանում նշումներ կատարվելուց հետո 3-օրյա ժամկետում ուղարկվում են Հայաստանի Հանրապետության ոստիկանության ինֆորմացիոն կենտրոն՝ հաշվառման համար:

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության (այսուհետ՝ ՀՀ ոստիկանություն) ինֆորմացիոն կենտրոնի կազմում գործում է *օպերատիվ տեղեկատու քարտադարան* ստորաբաժանումը, որտեղ հավաքվում, մշակվում, համակարգվում ու պահպանվում են Կարգի 4-րդ կետում նշված անձանց մասին տեղեկությունները, որի նպատակն է հանցագործությունների կանխման, նախականխման, խափանման, բացահայտման աշխատանքներում վարույթն իրականացնող մարմիններին, պետական կառավարման մարմիններին, ինչպես նաև ֆիզիկական անձանց օրենքով նախատեսված անհրաժեշտ տեղեկատվությամբ ապահովելը:

Այս պարագայում, երբ արդեն իսկ գոյություն ունի վերոնշյալ ստորաբաժանումը, որն ամբողջ ծավալով իրականացնում է Կարգի 4-րդ կետում նշված անձանց մասին

տեղեկությունների հավաքումը, մշակումը, համակարգումն ու պահպանումը, որից թե՛ վարույթն իրականացնող մարմինները, թե՛ պետական կառավարման մարմինները և թե՛ ֆիզիկական անձինք, հարկ եղած դեպքում, կարող են պահանջել և ստանալ օրենքով նախատեսված անհրաժեշտ տեղեկատվությունը, ուստի դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո քրեական գործերով դատարանի վերջնական որոշումների մասին տեղեկանքների հաշվառումը քննություն վարող մարմնի կողմից հանգեցնում է միևնույն գործողության լրացուցիչ կատարմանը և արդյունքում չի ապահովվում տեղեկանքների հաշվառման մեկ միասնական, համակարգված բազայի ձևավորումը, քանի որ վարույթ իրականացնող մարմինն ինքնին այդ տեղեկատվությունը հավաքող լիազոր մարմին չէ:

Ավելին, Կարգով նախատեսված է, որ վարույթ իրականացնող մարմինը կատարում է քրեական գործերի հաշվառման մատյանում նշումներ, սակայն նման մատյանների վարումը ՀՀ ոստիկանության գործառույթն է և վարույթ իրականացնող մարմիններում նման մատյաններ չեն վարվում:

Առաջարկվող կարգավորման բնույթը

Նախագծով առաջարկվում է քրեական գործերով դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո դատարանի վերջնական որոշումների մասին տեղեկանքների հաշվառումն անմիջականորեն իրականացվի ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի կողմից՝ առավել ևս, որ վարույթ իրականացնող մարմինները կարող են օգտվել և օգտվում են այդ տեղեկատվական համակարգից:

Ակնկալվող արդյունքը

Նախագծի ընդունումը թույլ կտա հստակեցնել քրեական գործերով դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո դատարանի վերջնական որոշումների մասին տեղեկանքների հաշվառման գործընթացը, կբացառի մասնակի և կրկնակի հաշվառումը վարույթ իրականացնող մարմինների կողմից, ինչպես նաև կդյուրինացնի փաստաթղթաշրջանառությունը և գործավարությունը:

ՏԵՂԵԿԱՆՔ

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 20-ի N 933-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման ընդունման դեպքում պետական բյուջեի եկամուտների ավելացումների կամ նվազեցումների մասին

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 20-ի N 933-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման ընդունման կապակցությամբ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի եկամուտների ավելացում կամ նվազեցում չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 20-ի N 933-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտության կամ բացակայության մասին

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 20-ի N 933-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում: